ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԸ» ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՄԱԳԴԱ ԱՐՄԵՆՅԱՆ

Հետխորհրդային երկրների քաղաքական զարգացման ճգնաժամում գտնվող պետական կառավարման համակարգն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է վերանայել «փափուկ ուժ»-ի գործիքակազմը: Դրա անտեսումը, ինչպես նաև ռազմավարական և մարտավարական ծրագրերի բացակայությունը բացասաբար են անդրադառնում պետության ներքին կայունության վրա՝ վտանգելով պետական իշխանության ինստիտուտների բնականոն զարգացումը և սոցիալ-քաղաքական կարգը:

Քաղաքական գիտության մեջ «իշխանությունը» դիտարկվում է որպես բարդ և բազմաշերտ կառուցվածք ունեցող երևույթ: Մեր համոզմամբ՝ իշխանությունն առաջին հերթին փոխհարաբերություն է, որտեղ դերակատարներից մեկը «կոշտ» կամ «փափուկ ուժ»-ի միջոցով ազդում է մյուսի գիտակցության, արժեքային համակարգի և համոզմունքների ձևավորման ու կերպափոխման վրա: Հետևաբար, քաղաքական իշխանություն ունեցող դերակատարների լեգիտիմության շարունակականությունը պայմանավորված է նրանց կողմից կիրառած ռեսուրսների հասցեականությամբ, ժամանակային նպատակահարմարությամբ և արդյունավետությամբ:

Արդի քաղաքագիտական հետազոտություններում տարբերակված են «փափուկ ուժ»-ի գործիքակազմի հետևյալ բաղկացուցիչ տարրերը՝ 1) *բիզնես միջավայր և նորարարական տեխնոլոգիաների կիրառում*, 2) *մշակութային քաղաքականություն, 3) կառավարման մոդել*, 4) *հանրային և խորհրդարանական դիվանագիտություն*, 5) *կրթություն*[1]: Հարկ ենք համարում փափուկ ուժի գործիքակազմը հավելել ***երկկողմ սոցիալականացման***[2] և ***վերասոցիալականացման*** գործոններով: Վերջիններս, ամբողջացնելով «փափուկ ուժ»-ի գործիքակազմը, ապահո-

[1] Տե՛ս **Юдин Н. В.** Жесткий взгляд на «мягкую силу»: критический анализ монографии Дж. Ная «Будущее власти» // "Вестник Московского университета". Серия 25. Международные отношения и мировая политика, № 4, 2013, էջ 134-163, **Изотов В. С.** «Мягкая мощь»: обновленный теоретический концепт и российская модель для сборки // "Вестник РУДН". Политология, 2011, № 4, էջ 146-155, **Егоров А. И., Гудгольд А. М.** «Мягкая сила»: немецкий опыт реализации // "Вестник Поволжского института управления". Т. 17, №1, 2017, էջ 25-32:

[2] «Երկկողմ սոցիալականացում» եզրույթը դիտարկվել է կառավարող էլիտա-հասարակություն փոխհարաբերությունների շրջանակում նշյալ դերակատարների բազմասպեկտ իրացման հնարավորությունների առկայության և դրա հիման վրա փոխադարձ ճանաչողության և ընկալելիության տեսանկյունից:

վում են «փափուկ ուժ»-ից անցումը «խելացի ուժին», որը արդի մարտահրավերների շրջանակում պետական քաղաքականության անբաժան մասը կազմող հավաքական գործիք է: «Տեղեկատվական-գիտելիքի-արհեստական ինտելեկտի հասարակությունում»[3] փափուկ ուժն այլևս չի կարելի դիտարկել զուտ միջազգային հարաբերությունների շրջանակում, քանի որ այն կերպափոխվել է՝ ելնելով նոր տեխնոլոգիաների կիրառման հրամայականներից: Ջ. Նայի կարծիքով՝ «փափուկ ուժ»-ն անհրաժեշտ է դիտարկել պետության առաջնորդների և կառավարող ընտրանու գործիքակազմի անբաժան մաս՝ որպես «խելացի ուժ», որն ապահովում է ներքաղաքական կայունությունը՝ հետամուտ լինելով արդի միջազգային հարաբերությունների համակարգում պետության ինքնության արդիականացմանը[4]:

Ներքաղաքական կայունության պահպանման գործում էական նշանակություն ունեն այն արժեքները, որոնց միջոցով իրականացվում է կառավարող ընտրանու և հասարակության միջև շարունակական և հետադարձ կապի վրա հիմնված հաղորդակցությունը: Այս տեսանկյունից Նայը տարբերակում է «փափուկ ուժ»-ի արդյունավետությունը պայմանավորող հետևյալ հմտությունները՝ *1) հուզական հավասարակշռություն, 2) հեռատեսություն* և *3) հետադարձ կապի վրա հիմնված հաղորդակցություն*[5]: Կարևորելով վերոգրյալ երեք հմտությունների զուգամիտման անհրաժեշտությունը՝ հարկ ենք համարում կիրառել «ըմբռնելիություն» (intelligibility)[6] եզրույթը, որը, մեր համոզմամբ, պետք է բնորոշի կառավարող էլիտայի և հանրության միջև հաղորդակցության էությունը: ***Վերը նշված հմտություններն ամբողջանում են կառավարող էլիտայի իշխանության արժեքաբանության մեջ՝ հանրայնացնելով քաղաքական դիսկուրսը: Վերջինս ընդգրկում է սոցիալ-պատմական հոլովույթում իմաստաբանական, ինչպես նաև քաղաքական «բիոֆիլ և նեկրոֆիլ»[7] էներգե-***

---

[3] **Inglehart R. F**. Cultural Evolution: People's Motivations Are Changing and Reshaping the World, Cambridge University Press, 2018, p. 201-216.

[4] Տե՛ս **Nye Jr. J. S.**, Hard, Soft, and Smart Power // The Oxford Handbook of Modern Diplomacy (Ed. by **A. F. Cooper, J. Heine,** and **R. Thakur**). Oxford University Press, 2013, էջ 559-576:

[5] Տե՛ս «**Joseph Nye** on Smart Power» // Harvard Kennedy School Insight Interview (July 3, 2008). https://www.belfercenter.org/publication/joseph-nye-smart-power (վերջին մուտք՝ 12.03.2019):

[6] Աշխատանքում կիրառվում է «intelligibility» եզրույթի փիլիսոփայական մեկնաբանությունը, համաձայն որի՝ դերակատարների (կառավարող էլիտա-հանրություն) միջև հաղորդակցությունն առաջին հերթին պետք է կրի իմաստաբանական, այլ ոչ թե զգացական բնույթ: Այսինքն՝ հաղորդակցության ընթացքում տեղեկատվության փոխանցումը, ստացումը և յուրացումը (ըմբռնելիությունը) երկուստեք պետք է տեղի ունենան մտավոր հարթությունում: Հետևաբար կարող ենք ենթադրել, որ շատ հաճախ դերակատարների միջև հաղորդակցության խաթարման պատճառը ոչ թե հուզական դաշտն է, այլ դերակատարների մտավոր անհավասարությունը, սոցիալականացման գործընթացի միակողմանի բնույթը, որը վտանգի տակ է դնում դերակատարներից որևէ մեկի վերասոցիալականացման հնարավորությունը: Խնդիրն այն է, որ ըմբռնելիության խաթարման պարագայում մենք գործ ունենք տեղեկատվության միակողմանի ներկայացման և մերժման հետ: Վերջինս դերակատարներին դարձնում է մարգինալներ, որոնք պարտադրաբար կամ ինքնակամ դուրս են մղում երկխոսության օրակարգը: https://en.oxforddictionaries.com/definition/intelligible

[7] **Фромм Э.** Анатомия человеческой деструктивности. М.: АСТ-ЛТД, 1998, с. 481-483.

տիկ դաշտերի ներդաշնակման առանձնահատկությունները:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ «փափուկ ուժ»-ից «խելացի ուժին» անցման գործընթացում սոցիալ-քաղաքական ինքնություն ունեցող կառավարող էլիտան քաղաքական դիսկուրսի միջոցով արդիականացնում է քաղաքական մշակույթը և ազատականացնում է սոցիալ-քաղաքական համակարգը՝ ստեղծելով նախապայմաններ ***ըմբռնելի (intelligible) երկխոսության և համագործակցության մշակույթի զարգացման համար: Այս համատեքստում նշենք, որ քաղաքական դիսկուրսի կենսունակությունը պայմանավորված է ընտրազանգվածի քաղաքական վարքի հիմքում ընկած շարժառիթներով, կառավարող էլիտայի իշխանության արժեքաբանությամբ, սոցիալ-քաղաքական համակարգում ընթացող երկկողմ սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացներով:***

Այս համատեքստում քաղաքական դիսկուրսի կենսունակությունը պայմանավորված է ընտրազանգվածի քաղաքական վարքի հիմքում ընկած շարժառիթներով, կառավարող ընտրանու իշխանության արժեքաբանությամբ, սոցիալ-քաղաքական համակարգում ընթացող երկկողմ սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացներով: Թե՛ կառավարող ընտրանին, թե՛ առաջնորդը պետք է օժտված լինեն կամ սոցիալականացման փուլերում ձեռք բերեն վերոնշյալ հմտությունները՝ հասկանալու համար՝ *1) ինչպիսի՞ արժեքաբանություն ունի և պետք է ունենա որոշումների ընդունման գործընթացը, 2) ո՞վ է տվյալ որոշման հասցեատերը, 3) արդյո՞ք այդ որոշումը ժամանակավրեպ չէ և 4) քաղաքացու գիտակցության և կենսագործունեության տիրույթում որակական ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում այս կամ այն որոշումն ընդունելու արդյունքում:*

Ակնհայտ է, որ պատասխանատվության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրը[8] վերասոցիալականացումը դարձնում է հրամայական ժողովրդավարական անցումից համախմբման գործընթացում գտնվող ընտրանիների համար: Այս մոտեցումը կարևորվում է խորհրդարանական կառավարման ժամանակ, քանի որ նորընտիր պատգամավորների օրենսդրական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նրանց վերասոցիալականացման գործընթացով և պատասխանատվության՝ ինտիտուցիոնալ հիմքի ընկալմամբ: Փաստորեն, ռազմավարական ընտրանին կարող է դառնալ այն սոցիալ-քաղաքական խումբը, որը *զուգամիտում է արդիականացման, սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացները*՝ կերպափոխելով հասարակության սոցիալ-քաղաքական կարգը ըստ ներքին և արտաքին մարտահրավերների:

Վերասոցիալականացումը՝ որպես բազմաչափ երևույթ, էապես ազդում է խորհրդարանի և հանրային իշխանության ինստիտուտների

[8] Տե՛ս **Keller S.**, Beyond the Ruling Class: Strategic Elites in Modern Society. Routledge, 2017, էջ 4-22:

արժեքաբանական կողմնորոշումների վրա: Կարևորելով խորհրդարանի՝ որպես հանրային իշխանության գերակա ինստիտուտի դերը՝ Մ. Ռաշը և Ֆ. Գիդդինգսը[9] հիմնավորում են, որ հանրության վստահության և պատգամավորական գործունեության արդյունավետության հիմքում ընկած է խորհրդարանական վերասոցիալականացումը: Վերջինս ենթադրում է քաղաքական մշակույթի արդիականացման շրջանակում քաղաքական գործչի և քաղաքացու կողմից նոր վարքաբանական մոդելների, դրանց իրացման որակական, արժեքային և իրավաքաղաքական գիտելիքների նորարարացում և կիրառում:

Խորհրդարանական կառավարման պայմաններում ներկայացուցչական ժողովրդավարության իրական ապահովման և քաղաքացիության ինստիտուտի կայացման տեսանկյունից խորհրդարանական վերասոցիալականացումն ունի կարևորագույն նշանակություն: Հենվելով «խելացի ուժ»-ի հայեցակարգի վրա՝ անհրաժեշտ է ժողովրդավարացնել քաղաքական մշակույթը՝ գործընթացի թիրախ դարձնելով թե՛ պատգամավորների և թե՛ հասարակական գիտակցության ապածայրահեղականացումը (*de-radicalisation*) ինստիտուցիոնալ նորմերի և հանրային քաղաքականության նկատմամբ:

Խորհրդարանական սոցիալականացման մոտեցումներում *«de-radicalisation»* եզրույթը, ոմանց կարծիքով, արտացոլում է պատգամավորների և հանրության պատրանքային պատկերացումներն իշխանության ինստիտուտների և պետության հանրային քաղաքականության մասին: Ի հավելում այս տեսակետի՝ Մ. Շեպհարդը փաստում է, որ խորհրդարանական սոցիալականացման և վերասոցիալականացման արդյունքը պետք է լինի խորհրդարանի՝ որպես հանրային իշխանության ինստիտուտի լեգիտիմության, «օրենսդրական խաղի կանոնների»[10], ինչպես նաև հանրության և պատգամավորների կողմից ինստիտուցիոնալ նորմերի և ավանդույթների յուրացումը և դրանց համաչափ կերպափոխումը[11]:

Հետխորհրդային երկրների, այդ թվում՝ Հայաստանի դեպքում հասարակական գիտակցության ծայրահեղականացման (radicalisation) պատճառը հասարակության և իշխանությունների *սոցիալականացման տրոհված գործընթացն է և արդյունքում՝ վերասոցիալականացման ցածր մակարդակը: Մեր կարծիքով՝ այն պայմանավորված է հետևյալ երկու գործոններով: Մի կողմից՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեությունը ՀՀ անկախության 28 տարիների ընթացքում ուղեկցվել է հետարդիական (պոստմոդեռն) արժեքների այլընտրանքային մեկնաբանություններով: Վերջինս հանգեց-*

[9] Տե՛ս **Rush M. Giddings Ph**. Parliamentary Socialisation: Learning the Ropes or Determining the Behaviour, 2011, by Palgrave Macmillan, էջ 36:

[10] **Wahlke J. C., Eulau H., Buchan W. and Ferguson L. C.**, The Legislative System: Explanations in Legislative Behaviour. N.Y., 1962, p. 167.

[11] Տե՛ս **Shephard M. P.,** Term limits: evidence of careerism and socialization // Journal of Legislative Studies, 2, 199, էջ 262:

րել է հանրության կողմից բազմաթիվ անորոշություններով համեմված սոցիալ-քաղաքական օրակարգերի մշակման: Մյուս կողմից՝ պատահականության սկզբունքով հանրային իշխանության դերակատարներ դարձած, խմբային տարաբնույթ (բիզնես, քրեածին, վերազգային և այլն) շահեր սպասարկող, «անպատասխանատու» ազատության կրիչ պատգամավորների իրացման թիրախը դարձել է տեղեկատվական աղմուկի «արտադրումը»:

Քաղաքական համակարգի կերպափոխման գործընթացների հոլովույթում գտնվող հասարակությունների համար քաղաքական վերասոցիալականացումն ընկալվում է որպես մարտահրավեր: Այս առումով ամերիկացի մի խումբ քաղաքագետներ, համեմատելով քաղաքական համակարգերի արդիականացումը, կարևորել են քաղաքական մշակույթի և քաղաքական սոցիալականացման գործընթացների փոխներդաշնակման հրամայականները: Նրանց դիտարկմամբ՝ քաղաքական մշակույթի զարգացման անբաժան մաս է համարվում արդիականացումը, քանի որ վերջինս, ամփոփելով օրեցօր փոփոխվող սոցիալական, քաղաքական, տեղեկատվական, կրթական զարգացման միտումները, ներազդում է հասարակության վարքաբանական մոդելների կերպափոխման վրա[12]:

Հետխորհրդային երկրների, հատկապես Հայաստանի պարագայում 1990-ական թվականներից իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումները, ինչպես նաև պետական կառավարման գործընթացում ծագած քաղաքական զարգացման առաջին ճգնաժամը բաշխման և վերաբաշխման հետևանք էին: Սակայն անցումային գործընթացում վերաբաշխումն ուղեկցվեց հասարակության վտանգավոր բևեռացմամբ, որի պատճառով խախտվեց նախկին հարաբերական հավասարությունը: Դրա հետևանքով առաջացած սոցիալական կոնֆլիկտները գրեթե բոլոր ոլորտներում հանգեցրին շարժընթացի տեմպերի նվազման կամ ճգնաժամի՝ «մարգինալ-պոպուլիստական մասնակցության»[13], ինչպես նաև սերունդների միջև համերաշխության խզմանը: Այս խնդիրը հատկապես արդիական է ավագ սերնդի ներկայացուցիչների շրջանում, քանի որ ստեղծվում է տպավորություն, որ այդ սերունդը դուրս է մնացել քաղաքական սոցիալականացման գործընթացներից, իսկ եթե փորձենք առավել հստակ ձևակերպել՝ անցում է կատարել ապասոցիալականացման գործընթացի: Խնդիրն այն է, որ ավագ սերնդի ներկայացուցիչները, որոնց ընդունված է կոչել «homo soveticus» կամ «խորհրդային համակարգից ներգաղթյալներ»[14], քաղաքական համա-

---

[12] Տե՛ս **Альмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.** Сравнительная политология сегодня: мировой обзор. М., 2002, էջ 116-117:

[13] **Մ. Մարգարյան, Ա. Մուրադյան,** Մարգինալությունը քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում. գունավոր հեղափոխություններ, «21-րդ ԴԱՐ», № 3, 2008 // http://www.noravank.am/upload/pdf/355_am.pdf

[14] **Самаркина И. В.** Политическая ресоциализация: актуальный контекст исследования, 2006 // http://chsu.kubsu.ru/arhiv/2006_4/2006-4_Samarkina.pdf

կարգի կերպափոխման պայմաններում դժվարությամբ հարմարվեցին նոր քաղաքական իրականությանը, կառավարող ընտրախավի կողմից թելադրվող քաղաքական խաղի նոր կանոններին, հասարակական համակարգի և աշխատաշուկայի նոր պահանջներին:

Բանն այն է, որ «homo soveticus»-ի երկարակեցությունը հետխորհրդային տարածքում, այդ թվում և Հայաստանում, ընկալելի է այնքանով, որ զծային ազատականացումը չապահովեց ժողովրդավարության որակը՝ առաջ բերելով ինքնության ճգնաժամ: Այս տեսանկյունից արդիական է Յ. Գալթունգի սահմանած «մշակութային բռնություն» հասկացությունը, որը հանգեցրել էր պետական ինստիտուտների և հասարակության նկատմամբ գործադրված *ուղղակի և համակարգային բռնության*[15]: Դա բնորոշում է մարդու հիմնարար պահանջմունքների չբավարարված վիճակը, որը պատճառ է դառնում անձի «էկոլոգիական հավասարակշռության» խախտման, դեգրադացման կամ օտարման[16]: Դրանք դիտարկվում են սոցիալականացման գործընթացի տեսանկյունից՝ ենթադրելով մշակույթի ներքնայնացում (internalisation) երկու ձևով՝ ապասոցիալականացում սեփական մշակութային տիրույթից դուրս և վերասոցիալականացում այլ մշակութային տարածության մեջ: Այստեղ է, որ առաջ է գալիս մարգինալ քաղաքացիությունը, որը ենթադրում է գերիշխող մշակույթի տիրույթում ընդունված վարքային մոդելների, արժեքների և դերերի պարտադրում:

Սոցիալական հոգեբանության շրջանակում իրականացված հետազոտությունները փաստում են, որ «homo soveticus»-ը վերարտադրվում է, ինչն ուղեկցվում է հասարակության կողմից պոստմոդեռն արժեքները բնականոն ներքնայնացնելու անընդունակությամբ և դրա հետևանքով նախկին «անվտանգ» կեցության մոդելի հանդեպ կարոտախտով: Վերոնշյալ խնդիրն արդիական է նաև երիտասարդ սերնդի համաժամանակյա բազմաբևեռ իրացման տեսանկյունից, քանի որ վերջինս, իր կամքից անկախ, կառուցում է սոցիալ-քաղաքական վարքի իր մոդելները՝ հենվելով ավագ սերնդի սոցիալականացման մոդելների վրա:

Ամբողջատիրական համակարգից ժողովրդավարականի անցման գործընթացում գտնվող կոլեկտիվ մտածողություն և անհատական ինքնաիրացման ցածր մակարդակ ունեցող քաղաքացին, զուրկ լինելով վերասոցիալականացման հնարավորություններից, չկարողացավ յուրացնել սոցիալ-քաղաքական նոր համակարգի էությունը: Այս առումով սահմանադրականությունն ուսումնասիրող քաղաքագիտությունն է հնարավորություն տալիս բացահայտելու պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային թերությունները: Չէ՞ որ քաղաքական սահմանադրականության տեսանկյունից *սահմա-*

---

[15] Տե՛ս **Galtung J.** Cultural violence. Journal of Peace Research, Vol. 27, №3. (Aug., 1990), էջ 291-305. https://www.galtung-institut.de/wp-content/uploads/2015/12/Cultural-Violence-Galtung.pdf

[16] Տե՛ս նույն տեղը:

նադրությունն առաջին հերթին քաղաքական գործընթաց է, այլ ոչ թե իրավական նորմերի ամբողջություն: Սահմանադրության դիտարկումը զուտ իրավական տեսանկյունից ինքնանպատակ է, քանի որ չի ապահովում այն տարածությունը, որտեղ պետք է ձևավորվի և զարգանա քաղաքական հասարակությունը:

Խորհրդարանական կառավարման պայմաններում հանրային կյանքում խորհրդարանի դերի վերաարժևորումը հրատապ է դարձնում օրենսդրական սոցիալականացման երևույթը: Այն տեղի է ունենում նախընտրական գործընթացներից հետընտրականին անցման փուլում: Ուսումնասիրությունները[17] ցույց են տալիս, որ գոյություն ունի փոխհարաբերության բացակայություն քաղաքական գործչի սոցիալականացման սկզբնական փուլի և հետընտրական շրջանում արդեն իսկ ձևավորված սոցիալ-քաղաքական դիրքորոշման միջև: *Այդ միջանկյալ հատվածն ընդգրկում է տվյալ պատգամավորության թեկնածուի քաղաքական փորձառությունը, որը պայմանավորում է համապատասխան վարքագծի ձևավորումն անկախ սոցիալականացման սկզբնային փուլում առկա գործոններից: Քաղաքական փորձառությունն ամփոփում է ընտրազանգվածի հետ սոցիալ-քաղաքական հարաբերությունների բովանդակությունը, հետադարձ կապի վրա հիմնված հաղորդակցությունը, կուսակցական գործունեությունը և կուսակցական նույնականացման խնդիրները:* Պատգամավորի նախաօրենսդրական գործունեությունը քաղաքական փորձառության շրջանակում ունի որոշիչ ազդեցություն պատգամավորի և հանրության սոցիալականացման և սոցիալ-քաղաքական ինտեգրման գործում: Այս առումով հատկանշանական է այն հանգամանքը, որ խորհրդարանի՝ որպես հանրային իշխանության գերակա սուբյեկտի լեգիտիմության հիմքում ընկած է պատգամավորների օրենսդրական վարքագծի առանձնահատկությունները: Այսինքն՝ նկատի է առնվում հասարակության սոցիալ-քաղաքական պատասխանատվության, իրավաքաղաքական գիտակցության զարգացման մակարդակը, ինչպես նաև օրենսդրական սոցիալականացման հասցեականությունն ապահովող այն ընթացակարգերը, որոնք ապահովում են պատգամավորի և քաղաքացու միջև հաղորդակցության որակը:

Խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների հիմնական գործառույթը պետք է լինի հասարակության առաջարկի և պահանջարկի գնահատումը՝ ըստ ժամանակի մարտահրավերների վերջնանպատակ ձևավորելով ***հանրային իրական օրակարգի*** արդիականացումը: Այս պարագայում է, որ սոցիալականացման գործընթացը ունենում է երկկողմանի բնույթ: Երբ սոցիալականացման գործընթացին մասնակցելու

[17] Տե՛ս **Rush M., Giddings Ph**., Parliamentary Socialisation: Learning the Ropes or Determining the Behaviour. Palgrave Macmillan, 2011, էջ 36:

հնարավորություն է ունենում միայն մեկ կողմը, արդյունքում, մեր կարծիքով, հասարակության տարբեր հատվածների (երիտասարդություն, միջին և ավագ սերունդներ) միջև տեղի է ունենում շահերի և հետաքրքրությունների բախում, իսկ դերակատարների միջև՝ առաջարկի և պահանջարկի խզում:

Խորհրդարանի ինստիտուտի կայացման, խորհրդարանական էլիտայի և հասարակության շարունակական սոցիալականացման և վերասոցիալականացման, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական հասարակության զարգացման նկատառումներով ներկայացնում ենք հետևյալ երկու առաջարկությունները.

- Խորհրդարանին կից ձևավորել հասարակական ֆորում, որտեղ ներկայացված կլինեն խորհրդարանական վերահսկողություն իրականացնող հասարակական կազմակերպությունները: Հայաստանում խորհրդարանական վերահսկողություն է իրականացնում միայն մեկ ծրագիր (parliamentmonitoring), որը ազգային մոդել չէ: «ԱԺ օրենսդրական գործունեության մոնիթորինգ» ծրագիրն իրականացնում է «Մանդատ» տեղեկատվական ՀԿ-ն «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ: Հասարակական ֆորումի ձևավորումը հնարավորություն կընձեռի միավորելու ոլոտային տարաբնույթ գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև ՀԿ կարգավիճակ չունեցող այլ քաղաքացիական նախաձեռնություններ: Ֆորումի նպատակը պետք է լինի հասարակության ներգրավվածության, սոցիալական պատասխանատվության, իրավաքաղաքական գիտակցության բարձրացումը, ինչպես նաև խորհրդարանական ու արտախորհրդարանական ուժերի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և հանրության միջև համագործակցության մշակույթի ձևավորումը: Ֆորումը կնպաստի նաև քաղաքացիական հասարակության զարգացմանը, որի գործունեության հիմքում ընկած կլինի ունիվերսալ և ազգային արժեքների զուգամիտումը՝ ի շահ հանրային օրակարգի սպասարկման:
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների և/կամ լրացումների միջոցով խստացնել ՀԿ-ների գրանցման պայմանները, առավելություն տալ ՀԿ-ների՝ հանրային կարիքներից բխող ծրագրերին, ինչպես նաև խորհրդակցական ձայնի իրավունքով ՀԿ-ների ներկայացվածություն ապահովել խորհրդարանում: Հատկանշական է այն, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացումը պետք է հստակ սահմանի ՀԿ-ների՝ խորհրդարանում ներկայացվածության պայմանները. այսինքն՝ դա պետք է հնարավոր լինի այն դեպքում, երբ նրանց գործունեությունը բխում է կառավարության սահմանած գերակայություններից: Այս բարեփոխումը կարող է հիմք ծառայել ինչպես ընդհանրապես հանրային ներառական քաղաքակա-

նության ձևավորման, այնպես էլ ներկայացուցչական երկկողմ սոցիալականացման և վերասոցիալականացման համար:

Ամփոփելով նշենք, որ խորհրդարանական կառավարման ձևը հետխորհրդային Հայաստանի համար ստեղծում է և՛ հնարավորություններ, և՛ մարտահրավերներ: Հնարավորությունների շրջանակում խորհրդարանական ընտրանին, շնորհիվ սոցիալականացման և վերասոցիալականացման «փափուկ ուժի» գործիքակազմի, մշակում է ժողովրդավարական հանրային քաղաքականություն՝ ազատականացնելով և արդիականացնելով քաղաքական ու քաղաքացիական մշակույթը:

Բանալի բառեր - *խորհրդարանական կառավարում, «փափուկ ուժ», «խելացի ուժ», երկկողմ սոցիալականացում, վերասոցիալականացում*

МАГДА АРСЕНЯН – *«Мягкая сила» социализации и ресоциализации в условиях демократизации парламентской формы правления РА.* – Переход к системе парламентского правления требует переоценки роли «мягкой силы». С этой точки зрения в статье анализируется необходимость дополнить инструменты «мягкой силы» двусторонней социализацией и ресоциализацией. Их симбиоз обеспечивает непрерывную модернизацию и устойчивость социально-политической системы. В результате завершённый инструментарий «мягкой силы» обеспечивает переход к «умной власти», которая позволяет преодолеть проблемы, возникшие в Армении при переходе к парламентскому правлению. В статье утверждается, что необходимо формировать политическое общество, а также развивать культуру сотрудничества между институтами гражданского общества, политическими партиями и в обществе в целом.

Ключевые слова: *парламентская форма правления, «мягкая сила», «умная сила» двусторонняя социализация, ресоциализация*

MAGDA ARSENYAN – *“Soft Power” of Socialization and Resocialization in the Conditions of Democratization of the Parliamentary Form of Government of RA.* – The transition to the parliamentary system of government requires a reassessment of the role of “soft power”. From this point of view, the article analyzes the need to fulfill the tools of the “soft power” with bilateral socialization and resocialization. According to the authors, their symbiosis ensures continuous modernization and the sustainability of the socio-political system. As a result, the completeness of the tools of “soft power” ensures the transition to the “smart power”, which allows overcoming the problems that have arisen as a result of the transition to the parliamentary governance in Armenia. In this regard, the article considers the need to form a political society, as well as the development of a culture of cooperation between the institutions of civil society, political parties and society as a whole.

Key words: *parliamentary form of government, “soft power”, “smart power”, bilateral socialization, resocialization*

Ներկայացվել է՝ 27.05.2019
Գրախոսվել է՝ 01.07.2019
Ընդունվել է տպագրության՝ 12.07.2019